

ձուներ, դէպ ի լեռներ ուստի կը յուսան  
 օգնութիւնս Գիշերակա ժողովուրդի կը  
 կիրքն այնքան հրապուրիչ և ներշնչից է  
 բարձրագոյն անմահունակ զաղափարնե-  
 րով, որքան յուզիչ և սրտացուցիչ է  
 ոսկէվար Ակնն տիեզերաց որ կապոյտ  
 կամարէն կախուած կը վառի անշէջ և  
 արծարծուն աստուածութեան փառաց տա-  
 ճարի մէջ. արեւն իւր ամբողջութեամբ  
 կ'ամփոփէ յինքն յաւիտենականութեան  
 խորհուրդներն և երեւելի նկարագիր է  
 իմանալի փառաց Արարչին, յորմէ հրա-  
 պուրուած հայ հանճարն պիտի կերտէ  
 իւր երկնամասն անդրանիկ խորանն, պիտի  
 վերցնէ արեւմտեան տափակ և անխմաստ

ծածըը և զնէ անոր տեղ հաշտութեան  
 ծիածանի աղեղն, ոչ Մասիսու սարերու  
 վրայ, այլ աւետարանական չորս սրենե-  
 բու վրայ, նշանակ չորեքհողման աշխար-  
 հի և կապէ սիրոյ պսակով իրարու հետ  
 անմեկնելի էյկեղեցւոյ չորս թեւերն Փրբկ-  
 չական Նշանն, որոյ վրայ պիտի հանգչի  
 ամենապայծառ վայելչութեամբ գործիքն  
 ամբողջ Աստուծոյ, և անոր հովանոյն տակ  
 պատուանդանի վրայ ծնրագիր հաւատա-  
 ցեալ Հայը պիտի աղօթէ բազկատուարած  
 դէպ ի Արեւելք, դէպ ի յաւիտենական և  
 անեղական լոյսն. Ex Oriente lux!.

Շարունակելի 2. Գ. ՆԱՍՊԵՏԵՆ

## Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Կ Ա Ն Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Է Ջ

(Շար. տօս Բազմավէպ 1930 էջ 106)



Ը. Հանգամանք ընտրելոյն. — Է. Կա-  
 թողիկոսորհնէից սահմանը՝ եպիսկոպոսոսաց  
 միջէն ընտրելու հայրապետը՝ մեծեալ տառ  
 մնաց: Եւ ինչպէս շարադրողէն յառաջ,  
 նաեւ յետոյ կը շարունակեն ընտրել բու-  
 լոր վիճակներէ: Եպիսկոպոսներէ, ինչպէս  
 Արիստակէս, Վրթանէս, Դանիէլ, Յուսիկ  
 Բ, Արբաշամ Ա, Կոմիտաս, Ներսէս Գ,  
 և մեր հայրապետաց մեծագոյն մասը:  
 Երիցներէ, ինչպէս Փառէն, Սուրմակ,  
 Մեղրոս, Յովսէփ: Երբեմն քաղապի աշ-  
 խարհական զասէն. ինչպէս Լուսաւորիչ,  
 Յուսիկ Ա, Ներսէս, Չարսրիս Ա, Յանսիս  
 վանականներէ. զոր օրինակ Արիստակէս՝  
 որ անապատէն տարուեցաւ իբր փոխա-  
 նորդ, և յաջորդեց Լուսաւորչին. Յովհան-  
 նէս Բ վանական թաթլոյ. Յովհաննէս

սրենական. Քրիստափոր Բ անապատա-  
 կան. Սողոմոն հայր Մաքննոցաց, Մաշ-  
 տոց՝ Սեւանայ, Անանիա Ա՝ Վարազայ,  
 Սարգիս Ա՝ Սեւանայ; Դէոսկորոս՝ Սա-  
 նահնի, և այլք: Յաճախ պատահմն ալ կը  
 թոյլատրէ աշխարհէ հրաժարելոց եկեղե-  
 ցական կարգ անուով՝ երբ հարկ լինի.  
 «Եթէ ի կամաց վերակացուին և ի հա-  
 սարակաց կորստութեանն բռնադատեսցի,  
 կ'ըսէ, յեպիսկոպոսութիւն կամ յառաջ-  
 նորդութիւն այլոց և ի քահանայութիւն,  
 ... հաւանեսցի»<sup>1</sup>: Իմանոսցայ այս կիտին  
 վրայ, որովհետեւ եպիսկոպոսորհնէք ճիշդ

1. Աս.՝ 112. — 2. Երէց ճեմարուած ս. Սահա-  
 կէն. հմտ. Կարեւոր ինքիբեքս, 280. — 3. Յեկոյտ.  
 Վնեթիկ, 1898, 212.

հակառակը կը գրէ, հայրապետին բերանը զննելով. «Տեսէք ըննութեամբ, մի՛ արգիօք խոստացեալ է նախ ի կրօնաւորութիւն անապատական կենօք, կամ յայլ ինչ ուխտք. զի ծանր յանցանք է ձեռնադրել զայսպիսին»։ Եւ առ ընտրեալը. «Տես զի մի՛ լիցիս խոստացեալ ի կրօնաւորութիւն. զի պիղծ է թողուն զիտուտեմն ջոռ և գալ յաստիճանս յայս (եպիսկոպոսութեան), և ընդդէմ կարգաց եկեղեցւոյ՝»։ Կը համարիմ՝ թէ այս արգելքը ստեղծեց եպիսկոպոսորհնէից շարադրողը՝ Ն. Լամբրոնացին<sup>3</sup>, որ ի բնէ չհանդուրժող մ'էր վանականաց քահանայացման<sup>4</sup>. Թէպէտ գործնականին մէջ այդ արգելքը չըյարգուեցաւ երբեք նաեւ զնոզէն վերջ։

2. Մեր Պզգն ի սկզբան իւր առաջին առաքելոյն Լուսաւորչի տոհմին սեպհականեց հայրապետական աթոռը՝ քրմական կամ դեւտական դրութեամբ, և այսպէս ալ մնաց՝ ցորչափ տեւեց անոր զարմը. և իրարու յաջորդեցին Գրիգոր, Արիստակէս, Վրթանէս, Թուսիկ, Ներսէս ու Սահակ Արիստակէս կ'անցնէի չօրք տեղ, «որպէս ըստ գրեցելոյն ի զէպ' թէ Փոխանակ հարց եղիցին որդիք կալ ի իշխան Վրթանայ երկրի՝»։ Վրթանէս զեռ աշխարհական, «ինդրէր յԱստուծոյ»... զի ի պտղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտօն տեսան՝»։ Թուսիկ ակամայ ամուսնացաւ, որպէս զի իւր զաւակունք «ի սպասաւորութիւն»... տեսան Աստուծոյ կացցեն», և յատկապէս ենէլին անոցմէ «հովիւքն գլխաւորք»։ Բայց որդիքն անարժան եղան. «և այլ ոչ ոք էր՝ որ զառաջնութիւն գլխաւորութեան քահանայապետութեանն»... յաջորդէր՝, մինչեւ հրատա իւր թուրք Ներսէս յորում փութցնել չայր Հայր «այնմ զաւակէ նորոգել զՆոգեւոր նահապետութիւնն»։

Ամէն անգամ որ Լուսաւորչի զարմը

կ'ընդհատէր, անոնց տեղ հայրապետական աթոռը կը գրաւէր սերունդը Մանազկերտի Աղբիանոս եպիսկոպոսին, որ քրմորդի ուսան մ'եղած էր Գրիգորի, անոր առաջին ձեռնադրեալը, անոր տեղապահն՝ երբ կը քացակայէր, և ուղեկից առ Կոստանդիանոս այցելութեան ժամանակ<sup>5</sup>։ Որով Գրիգորեանց անըպիտաններն այս առանձնաշնորհեալ եպիսկոպոսի ցեղէն լեցուցին սովորաբար, Շահակ, Թուսիկ, Զաւէն, Ռսպուրակ<sup>10</sup>, և աւելի վերջ Մելիտէ ու Մովսէս<sup>11</sup>։ Գուցէ դիպուածի արդիւնք չէր՝ որ Գիւտին ալ յաջորդեց իւր եղբորորդին ԹՆ. Մանդակունի<sup>12</sup>։

Նոյն դրութիւնը կար նաեւ եպիսկոպոսութեան մէջ՝ երբ հնարաւոր էր, — թէպէտ թ Առաքելական կանոնի կ'արգելուն զայն<sup>13</sup>, — և աւելի եւս ամուսնաւոր քահանայութեան մէջ<sup>14</sup>, որոց դիրքադոյն էր ապահովել ժառանգներ. այնպէս որ 692ին Տրուդան ժողովը կը դատապարտէր՝ որ «ի Հայոց աշխարհին զայնուսիկ միայն ընդունին ի կարգ ժառանգաւորաց՝ ոյք են ի քահանայական ազգէ» (կան. իր). ուր միայն թիւրիմացութեան արդիւնք էր անշուշտ, սահակեան կանոններէն ալ յայտնի, որ կը վկայեն՝ թէ տրիտ ժառանգորդաց իրաւունքն «տարալազ պիտանեաց և զիտեաց» կու տային<sup>15</sup>։

Ժ գարնէն դարձեալ կ'երեւի կաթողիկոսութեան ժառանգականութիւնը։ Ա թէնդորոսի կը յաջորդէ եղբայրն Եղիշէ Ա<sup>16</sup>. յետ Անանիայի կը նստին Վահան ու Ստեփանոս, և ապա Անանիայի քնորդին Խաչիկ Ա<sup>17</sup>. յետ Սարգսի՝ Խաչկան եղբայրը (՝) Պետրոս Գետադարձ<sup>18</sup>, և ասոր՝ քնորդին Խաչիկ Բ<sup>19</sup>։ Կրնան այս ընտրութիւնք եւս դիպուածի վերագրուել։ Եկաւ Պահլաւայի նեաց տոհմը, որոց յոջ անունն ու ազգակցութիւնը Լուսաւորչի տան հետ՝ առեղծուած մը կը մնայ թէ մեզ համար և

1. Գրէ. Թ. 1141. ևն. Ս. Վար. — 2. Բարբ. 1929, 395. — 3. Չմտ. Մեծ. պոթք. Վնեհակի, 1847, 52 — 58. — 4. Աղաթ. 642. — 5. Փաս. 10. — 6. Նոյն՝ 11. — 7. Նոյն՝ 85. — 8. Նոյն՝ 68. — 9. Աղաթ. 630, 650. — 10. Փաս. 45, 226, 268, 264. — 11. Փարպ.

330. — 12. Նոյն՝ 595. — 13. Մեծեք Թանգ. Կ. 135. — 14. Չմտ. Կանոնք Սահակայ, Սոփեթք, Բ. 88, 89. — 15. Անդ՝ 89. — 16. Ասորիկ՝ 157. — 17. Նոյն՝ 171. — 18. Զամբ. Բ. 296. — 19. Ուս. 152.

թէ Շնորհաւույն ինքնին՝ Սակայն և այնպէս անոնք իբր այդպիսիք՝ պահանջող հանդիսացան հայրապետական աթոռոյն, և Գր. Մագիստրոսի որդին Վահրամբ «հաստատեցին ի նախնական իւրեանց տիրական աթոռ, ըստ զրեցելուսն. փոխանակ հարց ըոց եղիցին որդիք քո. ոչ յաղագս ըստ մարմնոյ ընտանութեան միայն, այլ և ի Հոգւոյն ընտրութենէ նախ զպղեցեալ»։ Ուշագրաւ է նոյն Վահրամայ ինամբն ալ իւր ըրող թոռնեղը սընուցանել տալու, «լինել ժառանգ սրբոյ աթոռոյն, զի մի անպայազատ մնացի ի զարմէ նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի»։ Եւ այսպէս յաջորդական ընտրութեամբ կաթողիկոս նստան տոհմակիցեանը՝ Գր. Վկայասէր, Բարսեղ, Գրիգորիս, Ներսէս, Գր. Տղայ, ինչպէս տեսանք. և ասոնց ալ յաջորդեցին Գր. Քարապէտ ու Գր. Աղլըստ նոյն զարմէն։ Այս զրուցեան զէմ կը բողոքէր Տարսնի լայնամիտ առաջնորդը, որ տեսաւ ազոցմէ հինգը, զրելով այսպէս. «Նախ զհայրապետութիւնն և ապա զամենայն եկեղեցիքս զբաւեցաք ընդ ժառանգութեամբ»։ Նոյն սովորոյթը կը տիրէր նաեւ Աթթամարայ աթոռին վրայ։ Կղզւոյն տէրը կարոն Սեֆեղին՝ իւր որդին Ստեփանոսը կաթողիկոս ձեռնադրել կու տայ. յետոյ ասոր յաջորդ կ'ընտրեն եղբորորդին Զաքարիա. և սա եւս իւր աթոռին ժառանգ կը ձեռնադրէ իւր եղբորորդին Գաւթիս<sup>5</sup>։

3. Մեր եկեղեցական օրինաց մէջ ոչ մէկ որոշում կայ հայրապետութեան հըրաւիրելոց հասակին նկատմամբ, ուր գէթ եպիսկոպոսօրէնէն կը պահանջէ եպիսկոպոսն լինել «իբրեւ յիսնամենից», — թէպէտ կարգիդ շարադրողը Տարսնի եպիսկոպոս ձեռնադրուեցաւ «քսան և երից ամաց»<sup>6</sup>. — և Ստյ 1246ի ժողովը կը սահմանէ եպիսկոպոսին «մի պակաս քան զե-

րեսուն ամն», և երիցուն՝ «քան զքսանհինգ ամն»։ Օրինակներն հակառակ են կաթողիկոսութեան մասին, Լուսաւորչի թոռնը Գրիգորիս «հնգետասնամենից» կաթողիկոս կարգուեցաւ Վրաց ու Աղուանից<sup>7</sup>։ Ուսկից կընանք զուշակել՝ թէ ինչ կ'իմանար փաւստոս՝ որակելով զՅոսիպ «մանուկ» կամ «աւուրբք մանուկ» հօր աթոռն ելած պահուն<sup>8</sup>, փոքր վկայասէրը Գրիգորիս յիսուն երեք տարի հովուապետական ցուպը բռնած<sup>10</sup>, «նստաւ ի հայրապետական աթոռն՝ մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չեւ եւս լեալ էր սկիզբն մօրուացն», կը գրէ Մատթէոս<sup>11</sup>. և կիլիկեցոց Տարեգիրքը՝ թէ կաթողիկոս զրուեցաւ «ընդ դաստիարակու ձերոց, զի տղայ էր տիօք և ոչ եւս ունէր մօրուք<sup>12</sup>»։ Հ. Ալիշան անոր 18 տարի կու տայ<sup>13</sup>, Խակ հասակի մէջ ընտրուեցաւ նաև Գրիգոր Քարապէտ, ինչպէս կը գրէ Լամբրոնացին՝ թէ Լեւոնէ հրաւիրուիք է «ի մանուկ կաթողիկոսին ձեռնադրելն», և կը յիշէ «զմանկանն անհանձարի գիր»<sup>14</sup>, որ կիրակոսէ եւս կը կոչուի «Գրեգորիս տղայն»<sup>15</sup>։ Հասակին վերագրելի է իւր եղբրական վախճանն ալ<sup>16</sup>. Այս տեսաւ ընտրութիւնը ընականապէս աթոռի ժառանգականութեան պտուղներն էին. Ասոր հակառակն ալ կայ երբեմն. ալեւորներ՝ որ տարածամ յաթոռ կ'ելնեն. Այսպիսի էր Սողոմոն, զոր երբ խրճէէն կը տանէին հայրապետանոց, և ազնուականներն ունն ուննը հարցուցին՝ թէ այդ հասակին ինչո՞ւ կ'երթար այն ծանր պաշտօնին, պատասխանեց. «Երթամ՝ զի գեղապանոյճ նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետան տամ յորմ եկեղեցոյն»։ Արդարեւ յաջորդ տարին կը վախճանի, և «կենդանագրի ի քաւարանի սրբում»<sup>17</sup>, հայրապետական եկեղեցւոյն մէջ՝ ուր կը նըկարուէին կաթողիկոսունք։

1. Հմմտ. Բառք յափաւ, 540. — 2. Շնորհ. Նամակ. 9. — 3. Սոփերք, ԺԻ, 30. — 4. Մեծ. պորթ. 55է. — 5. Թոյ. Արժք. 362, 363, 364, 366. — 6. Հայապատում, 416. — 7. Կիրակ. 169. — 8. Փասս. 10. — 9. Նոյն՝ 29, 30. — 10. Սոփերք, ԺԳ, 67. — 11. Ուս.

412. — 12. Գրչ. Ք. 1308 Ս. Ղլտ. — 13. Շնորհ. եւ պրթյ. իւր. Վլենտի, 1873, 53, 45. — 14. Գր. Տղայի նմ. 224, 227. — 15. Կիրակ. 69. — 16. Սոս՝ 108. — 17. Յովհ. ԿԳ. 141.

4. Ինչ վիճակէ և ինչ հասակէ ալ ընտրուէին Լուսաւորչի յաջորդները, Հայք անոնց մէջ կը փնդոէին միշտ բարոյական արժանաւորութիւնը. այսինքն բարեպաշտութիւն և գիտութիւն աստուածային օրինաց: Առաջինը գրեթէ միշտ անպակաս եղեր է մեր հայրապետաց վրայ, մինչև առջին շրջանը՝ որը նկատեցինք ցարդ, երկրորդը՝ յաճախ փոքր և մերթ բարձր չափով փայլեր է անոնց լեզուին ու զբոյնները: Երկար կը լինէր՝ մեր Հին մատենագրութեան անոնց շատերու մասին տրուած գովեստները մի առ մի կոչել հոս, երբեմն արդար, ու մերթ չափազանցուած: Բայց անկասկած հրաշքի դէմքեր եղան ս. Գրիգոր և պայազատները, ընդհանրապէս ընդունած լինելով յունական նուրբ դաստիարակութիւնը Հայաստանէն դուրս, բոլորն ալ աստուածաբեւել ու զարգացած մտքով, մին հիմնով և միւսերն աներկիւղ ու պայքարող ախոյաններ ու նահատակներ քրիստոնէութեան ի Հայաստան: Անոցմէ վար չմնացին նաև իրենց տոհմակից համարուած Պահլաւունիք, արեամբ ու մտօք ազնուական, լաւ կրթուած, հմուտ, կրօնական լայն տեսութեամբ ու բեղնաւոր գրչներով մարդիկ: Եղան ազոնց հետ մրցող ուրիշ հայրապետներ եւս, Գիւտ, Մանգակունին, Եզը, Ներսէս Շինող, Կոմիտաս, Օձնեցին, Զաքարիա Ա, Կոստանդին Ա, Գր. Անաւարզեցին և այլք, որոց շատերն իրենց համբաւն արդարացնող մատենագրութիւն ալ թողուցին:

Սակայն զարտուրթիւնք եւս պակաս չեն. ինչպէս Զաւէն Արքիանոսեան, «այր չարաչար՝ խիստ և նախանձոտ», որ աշխարհականացուց հայ կղերը, զինուորական զգեստը հագնելով ինք և զգեցնելով անոր, և որոյ օրինակին հետեւեցան երկու յաջորդներն ալ՝ Շասակ և Ասպուրակ: Տխուր անուն ու գործ մը թողուցին Մովսէս եղիվարդեցին և Աբրահամ եւս, առաջինը հիմնելով հայկական հերձուածը, և երկրորդն ամբացնելով զայն, թափեցան ինչպէս պատճառաւ, զոր երկուքն ալ՝ զուրկ աստուածաբանական

հմտութեան և յունարեմի ծանօթութեանն՝ չէին հասկացած. հերձուած՝ որ բարոյական ու քաղաքական Պատուց և աղիտից աղբիւր մ'եղաւ ազգին՝ մեր ամբողջ անցելոյն մէջ, հակառակ տմանց անոր վերաբերած ցնորական նպատակաց ու բարեաց, և որոյ մասին ընդարձակօրէն խօսած եմ այլուր պատմական անհերքելի փաստերով՝:

5. Մեր ազգն իւր ընտրելոց վրայ ներքին արժանաւորութեան զատ կը փնդոէր ու կ'ախորժէր տեսնել արտաքին վայելչութիւնն ալ, ինչ որ յատուկ է զարգացած ցեղերու: Եւ պատմութեան մէջ կան աղոր օրինակները, մեծ մասամբ աղուական տոհմն ու փափկասուն կենցաղէ ընտրեալները, ինչպէս էին Գրիգորեանք ու Պահլաւունիք: Այսպէս ս. Յուսիկ կը նկարագրուի՝ «սիրօք տոռոյգ, և բարձր հասակաւ, գեղով երեսաց սքանչելի և չքնաղ»: Իւր թոռնը Ներսէս՝ հոգեկան բարձր յատկութեանց հետ՝ կը փայլէր նոյնպէս «ցանկալի գեղով իւրով, երկայն հասակաւ, և չքնաղատես հերօք վարսից իւրոց. . . տենչալի ցանկալի և զարմանալի և ահազին ամենայն նայեցող տեսողաց»: այնպէս որ «ոչ գտանէի ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի»: Եւ երբ հայրապետութեան առթիւ՝ զինք ընտրող ժողովոյն առջեւ վարսերը կը վիրային ըստ սովորութեան, «առ յոյժ գեղեցկութեանն բազումք յարտասուծ հարան՝ որք լուսնն կամ տեսին» անոր զլիւոյն և անձին այդ անշքացումը: Թովհան իմաստասէր երբ զնաց ելաւ ամիրապետին առջեւ, իւր բնատուր գեղեցկութեան հետ խառնած արուեստականն ալ՝ զոր ժամանակի քաղաքականութիւնը կը պահանջէր և արարացին տեսաւ զգաւարտահասակ զիտակն իւր՝ եւս առաւել փայլուն և պաշտպալուն զգեստուր պրծնաւորեալ, — որոց ներքեւ սակայն ծածկուած էր մարմինը խայթող խարազը, —

1. Փաւս. 263-64. — 2. Կարեաք խնդրեք, 3:9-95, 403-16 ևս. — 3. Փաւս. 90. — 4. Նշմ.՝ 68, 69, 70.

և զաղէրեկ ծաղկեալ մորուան ոսկեփունջ կազմեալ > ոսկի փռուով, « որ իջանէր մինչև ցգրապանս զգեստու նորա», հիացաւ մնաց ու մեծարեց զայն շքով:»

Հոնի նստող Սարգիս կաթողիկոսի մասին կը կարգանը՝ թէ էր նոյնպէս «այր սուրբ և հրաշափառ տեսիեամբ»:» Հրապուրիչ էր Շնորհաւոյն եղբայրը Գրիգորիս, «բարձրահասակ և զեղեցկատեսիլ և բարուքն խոնարհ»:» Եւ երբ Լատինաց հրաւիրով յԵրուսաղէմ գնաց անոնց ժողովին, պատկառանք մ'ազդեց անոնց վերայ, որ «բոս վայելչազգեաց և պատշաճագեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և զնուգոյն զեղեցկութիւն», կ'ըսէ Սամ. Անեցին՝: Սուրիչ վեհութիւն մ'ունէր Գրիգոր Տղայ, «այր սկայածիւ և անարկու տեսիեամբ, զուարթերես և առատասիրտ, լի իմաստութեամբ և զիտութեամբ և աստուածային շնորհօք, հանճարեղ և իմաստուն և ի խօսս և ի դարձուածս բանից»:» 1174ի յիշատակագիր մ'ալ կը յիշէ անոր «զլաւութիւն բարուց և զկորովութիւն մտաց... մանաւանդ զզեղեցկազուսութիւն կերպարանին բնաւին մարմնոյն»:» Եւ անոր անունն «ընդ ոլորտս տիեզերաց հռչակեալ եղև. մինչ զի այլասեռը հեռաբընակքն ընթացեալ մեծապարգև ընթայլիւք ի տեսիլն չքնազ և զարմանալի, իր տեսանէրն՝ պշնոյր և երթեալ համբաւէր,

և որ լսէրն՝ բորբոքէր առաւել»:» Անոր յաջորդը Գր. Գարազէժ՝ իւր մատաղու-թեան մէջ էր նոյնպէս «հասակաւ գեղեցիկ և բարիքը տեսանելով»:» Կ'ըսէ պատմիչը՝: Եւ բոլոր նկարագրութեանց մէջ կը շեշտուի հասակին բարձրութիւնը, որ անտարական կաթողիկոսաց վրայ կը մեղմէր չափով մը տարիներու թերութեան անատարձ ազդեցութիւնը:

Այդ արտաքին գեղը հանելի՛ բայց անհրաժեշտ չէր անշուշտ. բարոյական մեծագոյն արժանիքն անտեսել կու տար երբեքն առերեւոյթ անշքութիւնն իսկ: Սուրբմոն ծերութեան հետ նաև «յանհնարին ճգնողական վարուց յոյժ անաւագեալ» էր՝ երբ հայրապետութեան տարուեցաւ: Եւ Շնորհաւոյն իւր երկարակեաց հարազատին հետ՝ — որոյ գեղով ալ թերևս զարդարուած էր՝ — տարիներու ծանրութեան տակ ընկճուած, հիւժած, և «ոչինչ նուազ և մեք նովին տկարութեամբ զգածեալ եմք», կ'ըսէր՝ անոր յաջորդելու պահունք. այնպէս որ հազիւ եօթ տարի հովուեց ու վարձանեցաւ:

(Շարունակելի) 2. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. Յ. Կթղ. 129-81. — 2. Ուս. 255. — 3. Նոյն՝ 412. — 4. Շնորհ. եւ պրջ. 157. — 5. Տարեգիրք Կիլիկ. սեր. — 6. Հասար. յրդր. — 7. Կերակ. 69. — 8. Յ. Կթղ. 141. — 9. Շնորհ. Նամակ. 13.

### Մ Ա Յ Ի Ս Ն Է Կ Ո Ի Պ Ա Յ

Գարնան արեւն, թարմ թարմ սիւքերէն  
Հոգիս կը հրճուի, կը լենայ թանգով,  
Խօհեր անհամար կարծես թև կ'առնեն,  
Կը թռին հետուն, ազատ անվրդով...

Կը թռին այնպէ՛ս զուարթ երգեցիկ.  
Կ'երթան, կը գտնեն ներշնչութեան  
Ահունքը տրտում, ու մէկիկ մէկիկ  
Կեանքի կը բերեն ապրումներս անյոյս...

Կը բերեն... ծաղկուն մարմանդին վըրայ,  
Ու գաղջ բորբոքով մեղմու կը լըւան  
Ծալքերը թարուն վիշտերու անձայն

Ինձ կու տան կազդոյր. նոր յոյզեր՝ ընծայ,  
Ու նուրբ սարսուռներս Սաղարթներուն վրայ  
Կրկնաբար կ'երգեն. «Մայիսն է կու գայ...»:

1980 թ. ԱՋԱՅՈՒՆԻ